ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«04» 02 2022 թ.
№ 24/18/2-155

«Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Գրիգորյանին
ք. Երևան, Սարյան 36 շ., 12 բն.
էլ. հասցե՝ info.gng.armenia@gmail.com
ՀՎՀՀ 02831555
հեռ. 044-44-44-36

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի միջև 13.09.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-9/25-7 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 4-րդ եռամսյակում՝ ոչ ուշ քան 30.10.2021թ. մատակարարել 1500 լիտր «Ձեռքի ախտահանման հեղուկ», որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը **04.02.2022թ.-ին** միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Ջի-Էն-Ջի» ՍՊ ընկերությունը՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***44,378 (քառասունչորս հազար երեք հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ՝*** որպես Պայմանագրով նախատեսված տույժ, Պայմանագրի 6.2 կետի համաձայն և ***7,275 (յոթ հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ*** որպես տուգանք, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** և **900008000664** հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար ***145,500 (հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ***, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և ***218,250 (երկու հարյուր տասնութ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ,*** որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

Կատարող՝ Ա. Մաղաքյան
հեռ.010-66-24-94

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am